

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀՆՉՈՒՅԹԻ ԳԱՂԱՓԱՐԻ ՍԿՋԲՆԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՀՆՉՈՒՅԹԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՐԳԸ

ՎԱՐԴԱՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Ընդունված է ասել, որ իբրև լեզվաբանական գիտակարգ հնչույթաբանությունը ձևավորվել է նախորդ՝ 20-րդ դարի 20-30-ական թվականներին՝ կառուցվածքային լեզվաբանության կազմավորմանը զուգընթաց: Խիստ գիտական առումով դա, իհարկե, ճիշտ է: Բայց ճիշտ է նաև այն, որ հնչույթաբանության սկզբնավորումը սկսվել էր ավելի վաղ՝ 19-րդ դարի 70-ական թվականներին՝ Ի. Ա. Բոդուեն դը Կուրտենեի և Ֆ. դը Սոսյուրի հնչաբանական պատկերացումների շարադրանքով: **Ֆոնեմա** (phoneme) «հնչույթ» տերմինը Բոդուենը, Ն. Կրուշևսկու առաջարկությամբ, փոխառել է Սոսյուրից (վերջինս էլ իր հերթին 1879-ին այն փոխառել է ֆրանսիացի լեզվաբան Դյուֆրիշ-Դեթենետից), սակայն գործածել է միանգամայն տարբեր նշանակությամբ¹: Ճիշտ է նկատվել, սակայն, որ իրականում հնչույթաբանական սկզբունքները դրսևորվել են ավելի վաղ: Ըստ էության՝ հին այբուբենների ստեղծման հիմքում ընկած էր հնչույթային գրությունը²: Պիտի նշել, որ ավանդական լեզվաբանության մեջ իբրև **հնչյունաբանություն** և **հնչյունաբանական** ներկայացվածը զգալի չափով, եթե ոչ գերազանցապես, հենց **հնչույթաբանություն** է ու **հնչույթաբանական**: Հնչաբանական երկու գիտակարգերի սահմանազատումը նպաստեց ոչ միայն հնչույթաբանական, այլև բուն հնչյունաբանական հիմնահարցերի ավելի խոր մշակմանը: Կարծում ենք՝ հետաքրքրությունից զուրկ չէ տեսնել, թե այսօր բավականին խորությամբ մշակված, տարբեր տեսություններով ու դպրոցներով ներկայացող հնչույթաբանությունը զարգացման և փոփոխությունների ինչ հոլովույթ է ունեցել և մասնավորապես՝ հնչույթաբանության՝ որպես գիտակարգի ձևավորման հարցում ինչ դեր են խաղացել սկզբնավորող ուսմունքները:

Հնչույթաբանական հիմնահարցերը լեզվաբանների ուշադրության կենտրոնում են եղել հատկապես 20-րդ դարի առաջին կեսին: Այս ընթացքում տարբեր երկրներում ձևավորվեցին լեզվաբանական խմբակներ, որոնք, ի տարբերություն մինչ այդ միակ գիտական համարվող **տարածամանակյա** (դիախրոնիկ) մոտեցման, լեզվի ուսումնասիրության առաջնային (եթե ոչ՝ միակ) հայեցակետ հռչակեցին **համաժամանակյա** (սինխրոնիկ) մոտեցումը: Համաժամանակյա հայեցակետին նախապատվություն

¹ Տե՛ս Бодуэн де Куртенэ И. А. Избранные труды по общему языкознанию. Т. 1. М., 1963, էջ 126 (այսուհետ հղումներն այս աշխատությունից կտրվեն տեքստում՝ նշելով հատորը, էջը):

² Տե՛ս Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի տեսության և պատմության հիմնահարցերը, Բեյրութ, 2000, էջ 7:

տալը, ըստ էության, սկիզբ առավ Ֆ. դը Սոսյուրի «Ընդհանուր լեզվաբանության դասընթացից» (այսուհետև՝ «Դասընթաց»), ուր տեղ գտած գաղափարներից շատերը, առհասարակ, դարձան գրեթե ողջ 20-րդ դարի, հատկապես՝ նրա առաջին կեսի տեսական լեզվաբանության հիմնական շարժիչ ուժը: Լեզուն որպես ձև (որ նույնն է, թե՛ որպես կառուցվածք) դիտելու հարցադրումը զգալի չափով պայմանավորված էր համաժամանակյա հայեցակետի կիրառումով, որն էլ իր հերթին ենթադրում էր նախապատվությունը տալ ժամանակակից, կենդանի լեզուների ուսումնասիրությանը, ի տարբերություն պատմահամեմատական լեզվաբանության, որի գիտական շինվածքը բարձրանում էր հիմնականում մեռած լեզուների ուսումնասիրության հիմքի վրա: Մի կողմից լեզվական և խոսքային պլանների տարբերակման պահանջը (որ նույնպես «Դասընթացի» հիմնական գաղափարներից էր), մյուս կողմից, լեզվական կառույցի ողջ էությունը բացահայտելու նպատակով համաժամանակյա հայեցակետի կիրառումը խթանեցին հնչաբանության և առաջին հերթին՝ հնչույթաբանության՝ որպես լեզվական կառուցվածքի սկզբնական աստիճանի կամ մակարդակի քննությամբ զբաղվող գիտակարգի զարգացումը: Նախորդ դարի 20-30-ական թթ. նորաստեղծ լեզվաբանական ուղղության՝ կառուցվածքաբանության (ստրուկտուրալիզմ) երեք հիմնական կենտրոններից (Պրահայի, Իյելի, Կոպենհագենի) առաջին երկուսի ձևավորման գործում մեծ էր հնչույթաբանական հիմնահարցերի քննության դերը, ուստի այդ կենտրոնները հայտնի են նաև որպես հնչույթաբանական դպրոցներ, համապատասխանաբար՝ **գործառական (ֆունկցիոնալ) և նկարագրական (դեսկրիպտիվ) հնչույթաբանություն** անվանումներով³: Իհարկե, հնչույթաբանական հարցերի քննությունը չի սահմանափակվում մշակած երկու դպրոցներով: Նույն ժամանակաշրջանում այն եղել է նաև Լոնդոնի, Մոսկվայի և Լենինգրադի (այժմ՝ Սանկտ Պետերբուրգ) լեզվաբանական խմբակների ու շաղկերթի կենտրոնում: Իրենց մշակած հնչույթաբանական ուսմունքների ինքնատիպության և ստեղծած ավանդույթների շնորհիվ հիշյալ երեք կենտրոնները նույնպես հայտնի են իբրև հնչույթաբանական դպրոցներ: Ուշագրավ է, որ Մոսկվայի և Լենինգրադի հնչույթաբանական դպրոցները (այսուհետ՝ ՄՅԴ, ԼՅԴ) չեն ներկայացնում կառուցվածքային լեզվաբանությունը, որքան էլ որ կառուցվածքաբանության շատ գաղափարներ խորթ չեն նաև նրանց համար: Լեզվաբանական նոր ուղղությունների նկատմամբ աճող հետաքրքրությունը նախորդ դարի 60-80-ական թթ. խթանեց կառուցվածքաբանական հետազոտությունների ծավալումը նաև նախկին ԽՍՀՄ-ում: Բնականաբար, այդ հետազոտությունները չչրջանցեցին հնչույթաբանությունը⁴: Ի թիվս հնչույթաբանական խիստ բազմաբնույթ ուսումնասիրությունների, մշակվեց սկզբունքորեն նոր տեսություն՝ Ս. Շա-

³ Վերջինը իր կիրառած վերլուծության մեթոդի անունով հաճախ կոչվում է նաև բաշխական (դիստրիբուցիոն) (տես «Основные направления структурализма». М., 1964, **Апресян Ю. Д.** Идеи и методы современной структурной лингвистики. М., 1966, **Засорина Л. Н.** Введение в структурную лингвистику. М., 1974):

⁴ Տես **Шаумян С. К.** Проблемы теоретической фонологии. М., 1962, **նույնի՝** Структурная лингвистика. М., 1965, **նույնի՝** Современное состояние двухступенчатой теории фонологии // "Исследования по фонологии". М., 1966, էջ 3-24:

հունյանի «երկաստիճան» հնչույթաբանությունը, որը ևս ունեցավ համախոհներ ու հետևորդներ: Ուստի ոչ պատահականորեն խոսվեց նաև «շահունյանական հնչույթաբանական դպրոցի» գոյության մասին⁵:

Եթե նկատի ունենանք, որ, խոսելով լեզվաբանական (տվյալ դեպքում՝ հնչույթաբանական) դպրոցի սկզբունքների մասին, սովորաբար նկատի ենք ունենում դպրոցի հիմնադրի կամ նրա առավել վառ ներկայացուցչի հայացքները, այնինչ՝ որոշ դեպքերում այդ դպրոցի առանձին հետևորդներ կարող են ունենալ տարբերվող տեսակետ(ներ), կամ կարող են լինել նաև իրենց հայացքներով առանձնակի դիրք գրավող լեզվաբաններ, ապա պարզ կլինի, թե ինչ է նշանակում խոսել այս կամ այն դպրոցի սկզբունքների կամ, առավել ևս, գիտակարգի և այդ գիտակարգի ձևավորման հարցում հնչաբանական ուսմունքներից յուրաքանչյուրի, հատկապես՝ սկզբնավորող ուսմունքների դերի մասին: Այդ խնդրի համար անհրաժեշտ կլինի ստվարածավալ մենագրություն, հետևաբար հասկանալի է, որ մեկ հոդվածի սահմաններում այդպիսի առաջադրանքն անիրագործելի է⁶: Մեր նպատակն է, մասնավորապես, ցույց տալ, թե հնչույթաբանության՝ որպես գիտակարգի ձևավորման գործում ինչ դեր են ունեցել Բողունը դը Կուրտենեի և Ֆերդինանդ դը Սոսյուրի, ըստ էության, սկզբնավորող ուսմունքները:

* * *

Բողունը դը Կուրտենեի հնչաբանական⁷, մասնավորապես՝ հնչույթաբանական պատկերացումները փոփոխություններ են կրել իր գիտական գործունեության շուրջ վեց տասնամյակների ընթացքում: Այդ ժամանակաշրջանում նա հնչաբանական հարցերին անդրադարձել է տարբեր աշխատություններում, որոնցից հատկանշական են հատկապես չորսը. 1) «Մի քանի ընդհանուր դիտողություններ լեզվաբանության և լեզվի մասին» (1871), որն ուշագրավ է իբրև առաջին անդրադարձ, 2) «Սլավոնական լեզուների «համեմատական քերականության» առանձին բաժիններ» (1881), 3) «Յնչույթ», «Յնչույթաբանություն» (1899), որոնք լեհական հանրագիտարանի համար գրված բառահոդվածներ են, 4) «Յնչունաբանության և

⁵ Տե՛ս Ахманова О. С., Афонов Э. А., Давыдов М. Б. К вопросу о сущности и мета-языке синтаксической фонетики // "Исследования по фонологии". М., 1966, էջ 219:

⁶ Իր բնույթով ասվածին մոտ է Ա. Ա. Ռեֆորմատսկու «Յայրենական հնչույթաբանության պատմությունից» գրքի առաջին մասը, ուր հեղինակը քննում է հնչույթաբանական տարաբնույթ հարցեր՝ անդրադառնալով տարբեր դպրոցների և առանձին հնչույթաբանների տեսակետներին: Սակայն որքան էլ հեղինակը ժամանակի անվանի հնչույթաբաններից է, դժվար է նրա բոլոր դատողությունները համարել անաչառ թեկուզև այն պատճառով, որ նա ակնհայտորեն հետապնդում է մեկ հիմնական նպատակ՝ **ամեն գնով պաշտպանել ՄՅԴ-ի հայեցակարգը**: Այդ ճանապարհին նա չի խնայում նույնիսկ իր **ռազմավարական** համախոհներին՝ Ռ. Ի. Ավանեսովին և Մ. Վ. Պանովին, ովքեր առանձին հարցերում «հանդգնում են» շեղվել ՄՅԴ-ի հնչույթաբանական դրույթներից (տե՛ս Реформатский А. А. Из истории отечественной фонологии. М., 1970, էջ 82-91):

⁷ **Յնչաբանություն** (фонематика / համապատասխանաբար՝ **հնչաբանական**) տերմինը գործածում ենք որպես հնչունաբանությունը (фонетика) և հնչույթաբանությունը (фонология) ներառող գիտակարգի անվանում՝ հետևելով ակադ. Գ. Բ. Ջահուկյանին (տե՛ս Գ. Բ. Ջահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Եր., 1974):

հոգեհնչյունաբանության տարբերությունը» (1927), որը, ըստ էության, վերջին անդրադարձն է: Նման դեպքերում սովորաբար հիմք է ընդունվում վերջին խոսքը, սակայն Բողուենի հանգամանքը յուրահատուկ է և առանձնակի մոտեցում է ենթադրում հետևյալ նկատառումներով:

1) Հնչաբանական հարցերին, բացառությամբ հանրագիտարանային բառահոդվածների (1899), նա ադրադարձել է լեզվաբանական ավելի ընդգրկուն նպատակներ ունեցող աշխատությունների շրջանակներում կամ էլ հետապնդել է հիմնահարցին առնչվող մասնավոր խնդիր քննելու նպատակ: Բնական է, որ երկու դեպքում էլ առկա տեսակետները չեն կարող ամբողջական համարվել: Ամբողջական չեն կարող համարվել նաև հանրագիտարանային բառահոդվածները (թեպետև գրվել են ամփոփիչ խոսք ասելու չափանիշով), որովհետև նրանցից հետո կա 1927-ի հրապարակումը՝ նոր դիտարկումներով:

2) Ռուսական երկու հնչույթաբանական դպրոցները՝ Մոսկվայի և Լեհինգրադի, որոնց պատկերացումները տրամագծորեն տարբեր են հիմնական՝ հնչույթի ըմբռնման հարցում, իրենց տեսությունների առանցքային գաղափարները բխեցնում են Բողուենի հայացքներից, որոնք, սակայն, վերաբերում են ժամանակագրական տարբեր շրջանների:

3) Բողուենը այն լեզվաբաններից է, ովքեր իրենց գիտական գործունեության ընթացքում շայլորեն շաղ են տվել գաղափարներ, որոնցից շատերը տարբեր պատճառներով մնացել են սաղմնային վիճակում, սոսկ իբրև առաջին ծիլեր և միայն հետագայում այս կամ այն չափով մշակվել ու բյուրեղացվել են հաջորդների կողմից⁸: Այդօրինակ գաղափարների շար-

⁸ Ռուս լեզվաբանության մեջ տարածված կարծիքի համաձայն Բ. դը Կուրտենեն, Ֆ. դը Սոսյուրի հետ միասին, համարվում է կառուցվածքային լեզվաբանության նախահայրերից մեկը, որովհետև լեզվաբանական այդ ուղղության հիմքում ընկած հիմնարար գաղափարներից շատերը այս կամ այն կերպ տեղ են գտել նրա վաղ շրջանի ուսումնասիրություններում, իհարկե՝ հաճախ այլ տերմինաբանությամբ: Կառուցվածքաբանության թերևս ամենից գլխավոր սկզբունքը ժամանակակից, կենդանի լեզուների համաժամանակյա, այլ կերպ ասած՝ նկարագրական մեթոդով քննությունն է: Լեզվաբանների առջև այս պահանջը Բողուենը դրել էր դեռևս Ս. Պետերբուրգի համալսարանում 1870 թ. կարդացած իր ներածական դասախոսություններում՝ այդպիսով հակադրվելով երիտքերականներին, որոնց կարծիքով լեզվաբանությունը կարող էր լինել միայն պատմական: «Այնուամենայնիվ, որպես առաջին քայլ գիտության մեջ, որպես նախապատրաստություն՝ նկարագրական գործողություններն անհրաժեշտ են. ընդ որում, առաջին պայմանը ճիշտ և բարեխիղճ դիտարկումն է, որը կատարելության աստիճանով հանդիպում է ոչ շատերի մոտ, որովհետև բոլորը նայում են, բայց ամեն մեկը չէ, որ տեսնում է: Լավ **նկարագրական քերականությունները** (ընգծ. իմն է՝ Վ. Պ.), հուշարձանների և բառարանների հրատարակումները մշտապես կմնան մեր գիտության կարևոր պահանջը, և առանց նրանց նույնիսկ ամենահանճարեղ տեսական եզրակացություններին չի բավարարի փաստական հիմքը», - գրել է նա (Бодуэн де Куртене И. А., Գշվ. աշխ., հ.1, էջ 54): Գրեթե նույն միտքը, բայց ավելի ընդգծված շեշտադրումով, արտահայտել է Ն. Վ. Կրուշևսկին՝ Բողուենի տաղանդավոր աշակերտներից մեկը. «... Միայն նոր լեզուների ուսումնասիրությունը կարող է նպաստել լեզվի բազմաբնույթ օրենքների բացահայտմանը, որոնք այժմ անհայտ են այն պատճառով, որ մեռած լեզուներում կան բոլորովին չի կարելի բացահայտել, կան էլ անհամեմատ դժվար է բացահայտել, քան նոր լեզուներում: Վերջապես, միայն նոր լեզուների ուսումնասիրությունը կարող է հաստատել փոխադարձ կապը առանձին լեզուների միջև» (Крушевский Н. В. Очерки по языковедению. Казань, 1893 // "Хрестоматия по истории русского языкознания". М., 1973, էջ 416): Բողուենի աշխատություններում արտահայտվել են ոչ միայն կառուցվածքային ուղղության, այլև՝ առհասարակ արդի լեզվաբանու-

քում որոշ վերապահումով կարող են դասվել նաև նրա հնչյութաբանական դիտարկումները:

4) Իր գիտական գործունեության ընթացքում Բողունի լեզվաբանական, այդ թվում՝ հնչաբանական (фонематический) հայացքները ենթարկվել են որոշակի փոփոխությունների: Այդ հանգամանքը բացատրվում է նրա մշտապես որոնող, երևույթների խորքը թափանցելուն հակված խառնվածքով⁹: Բնական է, որ այդ որոնումների ընթացքում, առաջադրելով նոր մտքեր ու գաղափարներ, նա ոչ հազվադեպ ամբողջությամբ կամ մասնակիորեն հրաժարվել է որոշ նախորդներից: Այս երևույթը երբեմն դժվարացնում է հիմք ընդունել այս կամ այն տեսակետը՝ նրա հայացքների մասին խոսելիս, հատկապես, եթե այդ տեսակետ(ներ)ը արտահայտվել են իր վաղ շրջանի գործերում:

Բողունն դը Կուրտենի հնչաբանական դիտարկումներում ուշագրավ են հետևյալ առանձնահատկությունները:

1) «Ֆոնետիկա» և «ֆոնոլոգիա» (իմա՝ «հնչյունաբանություն» և «հնչյութաբանություն») տերմինները գործածում է որպես համանիշներ, բայց նրանց լեզվաբանական բովանդակությունը երկից երկ փոխվում է: Ընդհանուր առմամբ, Բողունը այդ տերմիններով նշանակում է լեզվական կառուցվածքի **հնչաբանական** մակարդակն առհասարակ, բացառությամբ «Ալավրոնական լեզուների...» (1881), ուր «մարդահնչաբանություն» (антропофоника)¹⁰ տերմինի՝ որպես ժամանակակից ըմբռնումով հնչյունաբանական հայեցակերպի նշանակչի ներմուծումով «հնչյունաբանությունը» և «հնչյութաբանությունը» գործածվում են արդի ըմբռնումով՝ հնչյութաբանական հայեցակերպի նշանակման համար: Մարդահնչաբանության ուսումնասիրության օբյեկտն է բնախոսական և ձայնաբանական բնութագրերով հատկանշվող հնչյունը, իսկ «հնչյունաբանության» («հնչյութաբանության») ուսումնասիրության օբյեկտն է հնչույթը՝ որպես «բառի որո-

թյան այլ հիմնարար գաղափարներ ևս, ինչպես, օրինակ, լեզվի և խոսքի տարբերական, լեզվական բաղադրիչների միջև ուղղահայաց (իմա՝ հարացուցային) և հորիզոնական (իմա՝ շարակարգային) հարաբերությունների առկայության ևն, ևն (տե՛ս **Шерба Л. В.** Избранные работы по русскому языку. М., 1957, էջ 94-95: **Виноградов В. В.** История русских лингвистических учений. М., 1987, էջ 115-117, **Апресян Ю. Д.**, նշվ. աշխ., էջ 24-27):

⁹ Բողունի լեզվաբանական հայացքների ակունքներն ընդհանուր են երիտքերականների հետ, ոմանք նույնիսկ նրան համարում են երիտքերականության հիմնադիրներից մեկը, սակայն հենց երիտասարդ տարիներից նա երիտքերականներին հակադրվել է առանձին սկզբունքային հարցերում: Դրանցից է, օրինակ, երիտքերականների կողմից հռչակված «հնչյունական օրենքների» բացարձակության սկզբունքը: Ըստ Բողունի՝ ճիշտ է խոսել **հնչյունական փոփոխությունների**, բայց ոչ՝ **հնչյունական օրենքների** մասին՝ նկատի ունենալով, որ «հնչյունական օրենք» համարվող փոփոխություններն, այնուամենայնիվ, բացարձակ չեն: Միևնույն ժամանակ Բողունը առաջարկել է համաբանության (անալոգիա) գաղափարը՝ որպես հնչյունական փոփոխություններ առաջացնող հիմնական պատճառներից մեկի: Նա բավականին թափանցիկ կերպով հակադրվել է նաև լեզվական տեղաշարժերը և առհասարակ լեզվի էությունը նախաստեղծ Ոգու գործունեությամբ բացատրող հունբուլղոսյան տեսությանը՝ նկատելով, որ նմանօրինակ բացատրությունները լեզվաբան-գիտնականի կողմից իրական պատճառները ճանաչելու անկարողության դրսևորումներ են պարզապես (տե՛ս **И. А. Бодуэн де Куртене**, նշվ. աշխ., հ. 1, էջ 57-61, հ. 2, էջ 329):

¹⁰ Բողունի առաջարկած տերմինն է. կազմվել է հունարենի ἀνθρώπος «մարդ» և φωνητικός «հնչյունաբանություն» բառերից:

չակի հնչյունական մասի ընդհանրական մարդահնչաբանական հատկությունների գումար»¹¹: Բարեփոխված հնչաբանական հայեցակարգում, որն առաջադրվում է 1899-ի բառահոդվածներում, հնչույթը ներկայացվում է հոգեբանական բնութագրով. «...Հնչույթը... լեզվական առումով միասեռ, անբաժանելի մարդահնչաբանական պատկերացում է, որը հոգում առաջանում է միևնույն հնչյունի արտասանությունից ստացվող տպավորությունների հոգեկան միաձուլման ճանապարհով», (1,355): Հետևաբար հոգեհնչյունաբանությանն է վերաբերում հնչույթի և առհասարակ՝ արդի ըմբռնումով հնչույթաբանական հարցերի քննությունը: Պատմական հնչյունաբանությունն զբաղվում է ինչպես «անցողական մարդահնչական երևույթների», այնպես էլ «մշտական, անընդհատական հոգեհնչյունական պատկերացումների» քննությամբ՝ դրանք դիտարկելով ժամանակային հաջորդականության մեջ (տե՛ս 1, 355):

«Մարդահնչաբանություն» և «հոգեհնչյունաբանություն» տերմինները հետագա կիրառություն չունեցան թերևս այն պատճառով, որ գնալով լեզվաբանական, այդ թվում՝ հնչաբանական միտքը ձգտեց սահմանազատվել մարդաբանությունից և հոգեբանությունից. գիտնականները փորձեցին հնչույթը բնորոշել զուտ լեզվաբանական սկզբունքներով. ուստի «մարդահնչաբանություն» տերմինը փոխարինվեց ավանդական հնչյունաբանություն, իսկ հոգեհնչյունաբանությունը՝ հնչույթաբանություն տերմինով¹²:

2) Բողոնենի տարբեր շրջանների հնչույթաբանական պատկերացումները հիմք են դարձել միանգամայն ուրույն հնչույթաբանական տեսությունների մշակման համար: Դրանք են.

Ա. Հնչույթը բնորոշվում է իբրև «ձևույթի շարժական բաղադրիչ և որոշակի ձևաբանական կարգի հատկանիշ», այսինքն՝ բնորոշվում է ձևույթի մեջ գրաված տեղով (տե՛ս 1, 122). ինչպես նաև՝ «Ձևույթները, որպես ձևույթներ... տարրալուծվում են ոչ թե հնչյունների, այլ՝ հնչույթների» (1, 121): Այս առումով առաջին պլան է մղվում հնչյունական միջավայրի («հնչյունական համակցությունների») դերը, որով էլ պայմանավորված է **տարամետ** (дивергентный) և **լծորդակից** (коррелятивный) հնչյունների տարբերակումը: Միմյանց նկատմամբ տարամետության հարաբերության մեջ են միևնույն հնչույթի տարբերակները (օր.՝ вертеть//вертит-[e//э]). («Вертеть// вертит բառերում տարամիտման տեսանկյունից առաջին վանկերի ձայնավորները երկու տարբեր հնչյուններ են, երկու տարամետներ, որոնց տարբերությունը կախված է մյուս բառի փոխկապակցվածության և հարմարումի (аккомодация) առանձին պայմաններից, բայց լծորդակիցների և հարաբերակիցների ոլորտում դրանք միևնույն հնչյունի պատահա-

¹¹ Бодуэн де Куртене И. А., նշվ. աշխ., հ. 1, էջ 121:

¹² Նշված տերմիններից բացի, Մ. Սվոդեշը գործածում է նաև «ֆոնեմիկա» (phonemics) տերմինը՝ դրանով նշանակելով «հնչյունների բնույթին և տեղաշարժերին վերաբերող տեսությունը», այլ կերպ՝ այն, ինչը մենք հասկանում ենք «հնչույթաբանության» տակ: Նա **ֆոնոլոգիան** (phonology) գործածում է «հնչյունների հերթագայությունների (համաժամանակյա հնչույթաբանություն) կամ փոփոխությունների (պատմական, տարածամասնակյա հնչույթաբանություն)» քննությամբ զբաղվող գիտակարգի նշանակությամբ (տե՛ս Хемп Э. Словарь американской лингвистической терминологии. М., 1964, էջ 245, նաև՝ Реформатский А. А., նշվ. աշխ., էջ 218-224):

կան ձևափոխություններն են, որի համար պիտի փնտրել մեկ ընդհանուր արտահայտություն»,-1, 120): Այսինքն՝ նրանք ծագումնաբանորեն նույնն են, իսկ տարամետությունը բացատրվում է լեզվի ժամանակակից փուլում գործող հնչյունական օրենքներով կամ սկզբունքներով: Լծորդակից հնչյունները ևս ընդհանուր ծագում ունեն, բայց այդ ընդհանուր ծագումը չի գիտակցվում լեզվի արդի փուլում (օր.՝ вратить//вращать-[т//ш], ходить//хожу-[-д//ж]). Նրանց կապը բացատրվում է պատմական անցյալի «հնչյունական օրենքներով», որոնք այս փուլում չեն գործում: Դրանք տարբեր հնչույթներ են, իսկ նրանց հարաբերակցությունը հնչույթային հերթագայություն է: Միևնույն լեզվի նույնածագում հնչյունները (տարամետներն ու լծորդակիցները) Բոդուենը միավորում է **համեմատականներ (компаративы/comparantes)**, իսկ տարբեր (հասկանալի է՝ ցեղակից) լեզուների նույնածագում (гомогенный/homogenitas) հնչյունները՝ **համապատասխաններ (корреспонденты/correspondentes)** տերմինային բնորոշումներով: Ակնհայտ է, որ Բոդուենը **տարամետներ** է անվանում միևնույն հնչույթի դիրքային տարբերակները կամ, այլ կերպ ասած, լրացուցիչ բաշխման հարաբերության մեջ գտնվող հնչյունները, որոնց, օրինակ, Լ. Վ. Շչերբան տվել է **հնչույթի նրբերանգներ**, Ա. Ա. Ռեֆորմատսկին՝ **տարբերակներ**, իսկ նկարագրական լեզվաբանության ներկայացուցիչներից շատերը՝ **այլահնչակներ** անվանումը: Բոդուենի կողմից **լծորդակցային** անվանված հարաբերակցությունը հետագայում ստացավ **ձևահնչույթային** տերմինային բնորոշումը, ընդ որում՝ ոմանք (օր.՝ Ն. Ս. Տրուբեցկոյը) խոսեցին **ձևահնչույթի**՝ որպես յուրահատուկ լեզվական միավորի գոյության մասին, իսկ ուրիշներն էլ (օր.՝ Ա. Ա. Ռեֆորմատսկին), ընդունելով ձևահնչույթաբանական հերթագայությունների փաստը, մերժեցին ձևահնչույթի ռեալությունը:

Մի կողմ թողնելով տերմինային յուրահատկությունները՝ տեսնում ենք, որ ընդհանուր առմամբ հնչույթի բնորոշման այս սկզբունքն է ընկած ՄՅԴ-ի ուսմունքի հիմքում՝ իբրև ելակետ¹³:

Բ. Ձևաբանական (ավելի ճիշտ՝ ձևաբանական) չափանիշից բացի, Բոդուենը հնչույթը բնորոշում է նաև բնախոսական-ձայնաբանական չափանիշով՝ այն համարելով «մարդահնչաբանական հատկությունների ընդհանրացում» կամ «գումար»։ որպես կանոն՝ հնչյունները դրսևորվում են հնչաշղթայում, հնչյունական փոխկապակցվածության մեջ, հետևաբար, հնչյունական միջավայրով պայմանավորված՝ կարող են փոխվել հնչյունի մարդահնչաբանական որոշ հատկություններ. «**նույնացնող դեր են խաղում մարդկային հոգեկանի մեջ** միահյուսված միշտ նույն արտաբերական-տեսողական պատկերացումները, չնայած այդ պատկերացումները ևս ամբողջովին կարծրացած, անշարժ չեն. նրանք շարժվում են, տատանվում են, **լցվում են անհամար երանգներով**» (2, 327, ընգծումն

¹³ Այս մասին տե՛ս **Реформатский А. А.**, նշվ. աշխ., **Նույնի**՝ Введение в языковедение. М., 1967, էջ 207-204, **Аванесов Р. И.** Фонетика современного русского литературного языка. М., 1956, **Панов М. В.** Современный русский язык. Фонетика. М., 1979: Ռ. Ի. Ավանեսովը, Պ. Ս. Կուզնեցովը (նրանք ՄՅԴ-ի հիմնադիր անդամներից են) և Մ. Վ. Պանովը մասնակի «շեղումներ» են թույլ տալիս ՄՅԴ-ի հնչույթաբանական թեզերից, որի համար էլ արժանանում են Ա. Ա. Ռեֆորմատսկու քննադատությանը:

իմն է - Վ. Պ.): Իսկ մինչ այդ Բողոները առաջադրում էր հնչույթի «մարդահնչական» տարբերակներից («տարամիտման երկու կամ երեք օղակներից կամ ավելի մասնավոր լծորդակիցներից») նրան «ավելի մերձավոր... ավելի ընդհանուր լծորդակիցը» որոշելու պահանջը, որ նույնն է, թե՛ հնչույթի հիմնական և ոչ հիմնական անդամների տարբերակման պահանջը. ավելին՝ առաջարկում է հնչույթի հիմնական անդամը որոշելու չափանիշ, ըստ որի՝ «... միշտ պիտի հիմք ընդունել այն, որը քիչ է բարդացած». նրա կարծիքով, օրինակ, *k//k* և *k//č* լծորդակիցներից հիմնականը պիտի համարել *k*-ն: Բացառությամբ վերջին դրույթի, մյուսները համահունչ են ԼՅԴ-ի ուսմունքին, իհարկե, մեկ վերապահումով ևս. եթե այս դպրոցի հիմնադրի՝ Շչերբայի վաղ շրջանի վերլուծություններում հնչույթի ըմբռնումը գերծ է հոգեբանական հիմքից (հմմտ. «...հնչույթ է կոչվում տվյալ լեզվի նվազագույն ընդհանուր հնչյունաբանական պատկերացումը, որը ունակ է զուգորդվելու իմաստային պատկերացումների հետ ու տարբերակելու բառերը և կարող է առանձնացվել խոսքում՝ առանց աղավաղելու բառի հնչյունական պատկերը»¹⁴), ապա ուշ շրջանի գործերում նա հրաժարվում է զուգորդելիության, այն է՝ հոգեկան բաղադրիչից և հնչույթը դիտարկում է իմաստային հակադրություններ ձևավորելու տեսանկյունից (հմմտ. «...կենդանի խոսքում արտասանվում են զգալիորեն ավելի մեծ, քան մենք սովորաբար կարծում ենք, քանակությամբ հնչյուններ, որոնք յուրաքանչյուր տվյալ լեզվում միավորվում են համեմատաբար ոչ մեծաթիվ **հնչյունական տիպերի մեջ՝ ունակ տարբերակելու բառերը և նրանց ձևերը...**»¹⁵, - ընդգծումն իմն է - Վ. Պ.):

Գ. Ձևույթների և բառերի կազմում հնչույթները ենթարկվում են «ձևաբանացման» և «իմաստաբանացման»: Այդ իրողություններն «օժանդակում են հնչույթների տարբերակմանը» լեզվում. «ձևաբանացնող» հատկանիշներն ունեն «արտաբերական-լսողական» բնույթ: Ըստ Բողոների՝ այդպիսիք են հնչերանգը, տևողությունը (երկարությունը կամ կարճությունը), քմայնացումը և ոչ քմայնացումը, «բերանի խոռոչի բացվածքի աստիճանը», կազմավորման տեղը, ձայնեղությունը և խլությունը, որոնք, սակայն, հավասարապես հնչույթաբանական արժեք չունեն բոլոր լեզուներում: Ընդ որում՝ «ձևաբանացման աստիճանից է կախված հնչույթների տարբեր ընկալելիությունը». վերոհիշյալ հատկանիշներն ստեղծում են իմաստաբանական հակադրություններ (հմմտ. *tom//dom, sam//tam*): Այսպիսով, Բողոնեն դր կուրտենեն առաջիններից մեկը (եթե ոչ՝ հենց առաջինը) խոսում է 1) **հնչ(յուն)աբանական հատկանիշների իմաստատարբերակիչ գործառույթի մասին, որ նույնն է, թե՛ հնչյունների հնչույթաբանական գործառույթների մասին, 2) հնչույթաբանական (իմաստատարբերակիչ) հատկանիշները բացահայտում է նվազագույն զույգերի հակադրության միջոցով: Մի՞թե այս սկզբունքները չեն Պրահայի գործառական հնչույթաբանության հիմքում: Որպեսզի ասվածն անհիմն չթվա, բավարար է հիշել Ն. Ս. Տրուբեցկոյի կողմից հնչույթին տրված հետևյալ**

¹⁴ Щерба Л. В. Русские гласные в качественном и количественном отношении // Языковая система и речевая деятельность. Л., 1974, с. 121.

¹⁵ Щерба Л. В. Фонетика французского языка. М., 1955, с. 19.

բնութագրերը. «Յնչույթներն էլ հենց բառային կառուցվածքների տարբերակիչ հատկանիշներն են»¹⁶, «...հնչույթը տվյալ հնչյունական կազմավորմանը հատուկ հնչույթաբանորեն էական հատկանիշների ամբողջություն է»¹⁷:

Իհարկե, բողոենյան հիշյալ երեք բնութագրերը միայն խթան ու մեկնակետ են եղել համապատասխան հնչույթաբանական դպրոցների համար: Վերջիններս այդ դրույթները զարգացրել ու խորացրել են յուրովի՝ ստեղծելով ինքնատիպ հնչույթաբանական ուսմունքներ: Ընդ որում՝ նշված երեք դպրոցներից ամենից միասնականը, որի ներկայացուցիչները չեն շեղվել հիմնադրի նախանշած սկզբունքներից, եղել է ԼՅԳ -ն: Պատճառը, թերևս, հենց հիմնադրի՝ Լ. Վ. Շչերբայի մեծ հեղինակությունն էր: Սյուս դպրոցներն ունեցել են հիմնադիրներ՝ հավասարազոր հեղինակությամբ, բայց ոչ՝ միանձնյա հիմնադիր, ուստի և միանգամայն հասկանալի են դրանցում տարակարծություններն ու ինքնատիպ լուծումները¹⁸:

3) Ըստ Բողուենի՝ հնչյունը՝ որպես բնախոսական-ձայնաբանական բաղադրիչ, ենթակա չէ հետագա տրոհման («հնչյունը մարդահնչորեն անբաժանելի մեծություն է»): Նույնը չի կարելի ասել հնչույթի մասին. որպես «ձևույթի շարժական բաղադրիչ»՝ երբեմն հնչույթը կարող է համադրել երկու և ավելի մարդահնչական որակներ, այն է՝ հնչյուններ, ինչպես, օրինակ, ռուսերենի պ(щэ)-ն. հմմտ. *вращать-врата-ի, вратить-ի* հակադրությամբ. («...щэ/ы/-ն անբաժանելի է որպես լծորդակից կամ էլ հարաբերակից, բայց մարդահնչական տեսակետից ոչ միայն բաժանելի է, այլև բաղկացած է երկու լիարժեք հնչյունից», -1,120): Այդպիսով, Բողուենը առաջադրում է, պարզ հնչույթներից բացի, նաև **բարդ հնչույթների** տարբերակման գաղափարը: Գիշտ է, նրա վերլուծության մեջ ամեն ինչ չէ, որ կարող է ընդունելի լինել (օրինակ, թե ինչու պիտի մեկ հնչույթի նշանակիչ համարվի *ra/pa/* հաջորդականությունը վերոհիշյալ բառերի կազմում), բայց փաստ է, որ բարդ հնչույթի գաղափարը ևս չանտեսվեց հաջորդների կողմից: Օրինակ՝ Տրուբեցկոյը նշում է յոթ սկզբունք, որոնց դեպքում հնչյունակապակցությունները պիտի դիտել մեկ հնչույթ: Իհարկե, առաջին հերթին խոսքը իջնող երկբարբառների մասին է, ինչպես անգլերենի [ai] երկբարբառը (հմմտ. *fly [flai]* «թռչել»), բայց՝ ոչ միայն¹⁹:

4) Նա տարբերակում է համաժամանակյա (սինխրոնիկ) և տարաժամանակյա (դիսխրոնիկ) հնչյունաբանություն (հնչույթաբանություն). առաջինին վերաբերում են մարդահնչաբանությունը և հոգեհնչյունաբանությունը

¹⁶ Трубецкой Н. С. Основы фонологии. М., 1960, с. 43.

¹⁷ Նույն տեղում, էջ 45:

¹⁸ «Պրահացիներից» ոմանք փորձեցին հնչույթը սահմանել առանց տարբերակիչ հատկանիշների հիշատակման, բայց միևնույն «գործառականության» դիրքերից. հմմտ. «Յնչույթների» տակ մենք հասկանում ենք փոքրագույն բաղադրիչներ, որոնք չեն կարող ենթարկվել հետագա մասնատման, և որոնք առանձնացվում են այդ լեզվի բոլոր ներքին գործառությունների փոխադարձ տրամախաչման շնորհիվ՝ պրոյեկտված (спроектированный) այդ լեզվի ձևի վրա» (Новак Л. Проект нового определения фонемы // "Пражский лингвистический кружок". М., 1966, էջ 97): Ի տարբերություն «Թեզերում» տեղ գտած բնորոշման, ուր դեռևս կան հոգեբանականության տարրեր, հնչույթի վերոհիշյալ բնորոշումը Նովակը համարում է «ամբողջովին լեզվաբանական»:

¹⁹ Տե՛ս Трубецкой Н. С., նշվ. աշխ., էջ 62-68: Ինչպես նաև՝ Зиндер Л. Р. Общая фонетика. М., 1979, էջ 211-216:

ըը (психофонетика), իսկ երկրորդին՝ պատմական հնչյունաբանությունը: Որքան էլ կառուցվածքային հնչույթաբանությունը սկզբնական շրջանում ուներ համաժամանակյա նկարագիր, 20-րդ դարի 40-ական թվականներից սկսած առանձին հնչույթաբաններ ուրուտի հիմնահարցերը քննեցին նաև տարաժամանակյա տեսանկյունից: Նրանցից էին Ե. Դ. Պոլիվանովը, Ռ. Յակոբսոնը, Ա. Մարտինեն, իսկ ավելի ուշ՝ Մ. Ս. Ստեբլին-Կամենսկին և Վ. Կ. Ժուրավյովը²⁰: Տարաժամանակյա հնչույթաբանությունը, ըստ էության, հնչույթաբանական սկզբունքների փոխադրումն էր տարաժամանակյա հնչյունաբանության ուրուտ: Այդպիսով, հնչույթաբանությունը ևս դարձավ երկհայեցակերպային գիտակարգ:

5) Բողոլենին է պատկանում «հնչույթային զրոյի» գաղափարը. բառերի (բառաձևերի) տարբերությունը (համեմատելիությունը) պայմանավորված է նրանց կազմում եղած հնչույթների տարբերությամբ, սակայն համեմատելի հնչույթների կողքին կարող են լինել անհամեմատելի հնչույթներ, որոնք «զուգադրելի են» («сопоставляемый»). Բողոլենի տերմինն է. պիտի հասկանալ՝ **հակադրելի են**) միայն հնչույթաբանական զրոյի հետ (հմմտ. Է-ն страм, строк, стражение, струга բառերում). զրոյի հետ «զուգադրելի» հնչույթներին նա տալիս է «նստվածք» («осадок») անվանումը²¹:

Հնչույթի բացակայությունը՝ «հնչույթային զրոն»՝ որպես իմաստատարբերակիչ գործոն, ընդունվեց գրեթե բոլոր հնչույթաբանական տեսություններում (հմմտ. հյ. կար//կա, սուր//ուր, ով//կով/հով/զով/մով, անութ // խանութ, ու. пыл «ավյուն», «բոց» // пыль «փոշի», да «այո» // дам «կտան» // дай! «տու՛ր», кот «կատու» // скот «անասուն», пар «շոգի» // пара «զույգ», тема «թեմա» // тем (համեմատական աստիճանի հետ) «է՛լ ավելի, այնքան ավելի» // «тем лучше» «ավելի լավ» ևն. այն խթանեց նաև «զրոյական ձևույթի» գաղափարը, որն ընդունեցին լեզվաբանական տարբեր դպրոցների ներկայացուցիչներ²²:

6) Բողոլեն ղը Կուրտենեի հնչույթաբանական ուսմունքը հայտնի է «հոգեբանական» անվանումով: Այս բնութագրով բողոլենյան հնչույթն օժտվում է «Հնչույթ» և «Հնչույթաբանություն» բառահոդվածներում (1899) և ամրապնդվում է վերջին՝ «Հնչյունաբանության և հոգեհնչյունաբանության տարբերությունը» (1927) հոդվածում՝ հարստանալով նոր բաղադրիչներով. հնչույթը սահմանվում է «որպես բնաշխարհից «հնչյունի հոգեկան» փոխարինող (субститут), որպես լեզվական մտածողության ռեալ կերպով գոյություն ունեցող և վերարտադրվող հնչյունական միավոր» (2, 326): Այսպիսի շրջադարձը Բողոլենի դեպքում միանգամայն բնական է, քանզի նա առհասարակ լեզվաբանությունը դասում է «հոգեկան, ավելի ճիշտ՝ հոգե-սոցիլական» գիտությունների շարքին: Ըստ նրա՝ հոգեբանության և սոցիլոգիայի հետ է կապված հոգեհնչյունաբանությունը (психо-

²⁰ Сте́н Поливанов Е. Д. Статьи по общему языкознанию. М., 1963, էջ 57-42, Якобсон Р. Избранные работы. М., 1985, էջ 116-132, Мартинэ А. Принцип экономии в фонетических изменениях. М., 1960, Стеблин-Каменский М. И. Очерки по диахронической фонологии скандинавских языков. М., 1966, Журавлев, В. К. Диахроническая фонология. М., 1986:

²¹ Сте́н Бодуэн де Куртенэ И. А., նշվ. աշխ., հ.1, էջ 123:

²² Сте́н, օրինակ, Блумфилд Л. Язык. М., 1968, էջ 232-233, Хемп Э., նշվ. աշխ., էջ 134:

фонетика)՝ հնչույթի քննությամբ զբաղվող գիտակարգը: Հնչույթի բնութագրից երևում է, որ այն ա) լեզվական միավոր է, բ) հնչյունի հոգեկան փոխարինող է, գ) գոյություն ունի ռեալ կերպով, դ) վերարտադրվող միավոր է: Թեպետև Բողունի լեզվաբանական ուսմունքում չկա լեզվական և խոսքային պլանների տարբերակման հատուկ շեշտադրում, ինչպես այն առկա է Սոսյուրի ուսմունքում, բայց մի կողմից՝ հնչույթի՝ որպես լեզվական միավորի և մյուս կողմից՝ հնչյունի՝ որպես «մարդահնչաբանական», այսինքն՝ արտաբերական-ձայնաբանական միավորի բնութագրերը վկայում են երկրորդը խոսքային պլանին վերագրելու մասին:

Հնչույթի հոգեբանական հայեցակարգը հետագա տարածում չունեցավ: Ինչպես արդեն նշվեց, նրանից հրաժարվեցին նույնիսկ Բողունի հնչույթաբանական ուսմունքի անմիջական ժառանգորդները: Ասվածը, սակայն, չի նշանակում, թե հնչույթի՝ որպես հոգեկան իրողության ընկալումն իսպառ մերժվեց: Այն ընդունել է, օրինակ, Է. Սեպիրը: Ըստ էության, այդ հայեցակարգին դիմել է Է. Ադայանը՝ իր կողմից տարբերակված երեք կարգի հնչական միավորներից (հնչուրդ, հնչյուն, հնչույթ) երկրորդին տալով հոգեբանական բնութագիր: Հնչույթի ընկալման հոգեբանական հիմքը չի բացառել Հ. Գլիսոնը²³:

Եթե վաղ շրջանի անդրադարձներում հնչույթը, այնուամենայնիվ, համարվում էր վերացարկված բաղադրիչ («հնչույթների նշանները հնչյունական տիպերի նշաններ են, **վերացարկումների նշաններ** (ընգծ. իմն է՝ Վ. Պ.), ընդհանրացումների նշաններ», 1, 123), ապա կերպավորվելով հոգեկանության տարազով՝ այն վերափոխվում է ռեալ կերպով (ըստ ամենայնի՝ նյութականորեն) գոյություն ունեցողի: Ըստ էության, հնչույթի հոգեկան բնութագրով է պայմանավորված մտային վերացարկման մակարդակում նրա երեք կողմերի՝ կինեմայի, ակուսմայի և կինակեմայի տարբերակումը, առաջինը՝ որպես «լեզվական մտածողության տեսանկյունից այլևս անտարալուծելի արտաբերական կամ հնչական բաղադրիչ», երկրորդը՝ նույն չափանիշով «ձայնաբանական կամ լսողական բաղադրիչ», իսկ երրորդը՝ որպես «կինեմայի և ակուսմայի միացյալ պատկերացում, այն դեպքերում, երբ կինեմայի շնորհիվ ստացվում է նաև ակուսման» (2, 290): Հնչույթի տրոհումը բաղադրիչների ներդաշնակ է լեզվական նշանի սոսյուրյան հայտնի դրույթներին (իմա՝ նշանն ունի հոգեկան բնույթ, այն ունի երկու կողմ՝ նշանակիչ և նշանակվող), հատկապես, եթե նկատի ունենանք, որ Բողունը արդեն 1881-ին («Մի քանի ընդհանուր դիտողություններ...») խոսում էր «մարդահնչական ֆրազների, ...բառերի, ...վանկերի...», որ նույնն է՝ **հնչադասությունների, հնչաբառերի, հնչավանկերի** տարբերակման անհրաժեշտության մասին, որը նույնպես լեզվաբանության մեջ կապվում է **լեզու-խոսք** հակադրության հետ: Բողունյան *հնչույթ // {ակուսմա / կինե-*

²³ Стен Сепир Э. Психологическая реальность фонем // Избранные труды по языкознанию и культурологии. М., 2001–2002, էջ 298-312, Է. Բ. Ադայան, Լեզվաբանության հիմունքներ, Եր., ԵՀՀ, 1987, էջ 240 («...Դրանով իսկ մենք որդեգրեցինք արտասանվող միավորի և դրա հոգեբանական պատկերացման տեսությունը և առաջինը կոչելով **հնչուրդ**, երկրորդը կոչեցինք **հնչյուն**, այսինքն՝ այն, ինչ որ Բողունը զր Կուրտենեն կոչել էր **հնչույթ** տերմինով»), Глисон Г. Введение в дескриптивную лингвистику. М., 1959, էջ 239:

մա} // կինակենա հարաբերակցության մեջ պարզ չէ **հնչույթ - կինակենա** առնչությունը, ավելի ճիշտ՝ նրանց գործառական դերաբաշխումը²⁴:

* * *

Ֆ. դը Սոսյուրի հնչույթաբանական պատկերացումներն ամբողջա-
նուն են կյանքի վերջին տարիներին՝ տեղ գտնելով հետմահու հրատա-
րակված «Ընդհանուր լեզվաբանության դասընթացում» (1916): Ուշագրավ է,
որ, ի տարբերություն «Դասընթացի» այլ նորարարական գաղափարնե-
րի, որոնք ողջ 20-րդ դարի ընթացքում եղել են տեսական լեզվաբանու-
թյան բուռն քննարկումների նյութ և ազդել են նրա զարգացման ընթացքի
վրա, Սոսյուրի հնչույթաբանական ըմբռնումը քիչ է գրավել ուսումնասի-
րողների ուշադրությունը:

Նրա հայեցակարգում հնչյունաբանության և հնչույթաբանության
բնութագրերի համար առավել կարևոր են այլ հանգամանքներ. 1) դրանք
վերաբերում են ժամանակային տարբեր հայեցակերպերի. հնչյունաբա-
նությունը՝ տարածամասակյա («Յնչյունաբանությունը պատմական գի-
տություն է», - 58)²⁵, իսկ հնչույթաբանությունը՝ ապաժամանակյա («Յնչույ-
թաբանությունը ժամանակից դուրս է գտնվում», - ն. տ.): 2) հնչյունաբանու-
թյունը լեզվաբանական գիտություն է, իսկ հնչույթաբանությունը լեզվա-
բանության համար ունի «օժանդակ» նշանակություն. ընդ որում՝ «այդ եր-
կու ուսումնասիրությունները ոչ միայն չեն համընկնում, նրանք նույնիսկ
չեն կարող հակադրվել» (ն. տ.):

Ըստ «Դասընթացի»՝ հնչյունը պարզ միավոր է («խոսքաշղթայի
հնչյունների սահմանազատումը կարող է հիմնվել միայն ձայնաբանական
տպավորության վրա», - 67), իսկ հնչույթը բարդ միավոր է, որովհետև այն,
ձայնաբանականից բացի, «հենվում է» նաև արտաբերական շղթայի վրա
(«հնչույթը լսողական տպավորությունների և արտաբերական շարժումնե-
րի, լսվող միավորի և արտասանվող միավորի գումարն է...», - 67- 68):

Յնչաբանության ժամանակակից ըմբռնման մեկնակետից փոքր-ինչ
տարօրինակ է «հնչույթաբանությամբ» լեզվաբանության համար «օժան-
դակ» գիտակարգի կարգավիճակ վերագրելը, սակայն ամեն ինչ հասկա-
նալի է դառնում, երբ հարցադրումը դիտարկում ենք «լեզվի լեզվաբանու-
թյունը» «խոսքի լեզվաբանությունից» տարանջատելու և երկրորդին առա-
ջինի համեմատ լրացնող գիտակարգի կարգավիճակ հատկացնելու սո-

²⁴ Ջ. Մ. Ալմուխամեդովան և Ե. Ֆ. Կիրովը հակված են կարծելու, որ հնչույթի
տարբերակիչ հատկանիշների գաղափարը առաջացել է բողոքական կինեմայի, ակուս-
մայի և կինակենայի տարբերակման հիմքի վրա (տե՛ս **Альмухамедова З. М., Киров Е. Ф.**
Три теории фонемы // И. А. Бодуэн де Куртенэ // "Бодуэн де Куртенэ и современная
лингвистика". М., 1988, էջ 37-38): Երևույթը այդ դիրքերից է ներկայացնում նաև Վ. Վ. Ի-
վանովը (տե՛ս **Иванов В. В.** Теория фонологических различительных признаков // «Новое
в лингвистике». Вып 2. М., 1962, էջ 142): Սակայն, ինչպես տեսանք, Բողոքենը «Յնչյու-
նաբանության և հոգեհնչյունաբանության տարբերությունը» հողվածում հնչույթաբա-
նական, այսինքն՝ տարբերակիչ է համարում «ձևաբանացնող» և «իմաստաբանաց-
նող» հատկանիշները (հնչերանգը, տևողությունը, քմայնացումը ևն), այսինքն՝ արտա-
բերական-ձայնաբանական հատկանիշները, որոնք ժամանակակից հնչույթաբանու-
թյան մեջ դիտվում են իմաստատարբերակիչ հատկանիշներ:

²⁵ Տեքստում տրվող հղումներն ըստ՝ **Ֆերդինանդ դը Սոսյուր**, Ընդհանուր լեզ-
վաբանության դասընթաց, Եր., 2008:

սյուրյան պահանջի համատեքստում: Լեզվաբանության ուսումնասիրության օբյեկտն է լեզուն, իսկ խոսքը լեզվաբանին հետաքրքրում է որպես լեզվի դրսևորման միջոց: Եվ որովհետև «հնչույթն», ըստ Սոսյուրի, խոսքային միավոր է, «հնչույթաբանությունն» էլ լեզվաբանության՝ որպես միայն լեզվական համակարգի քննությամբ շահագրգիռ գիտության համար «օժանդակ» նշանակություն ունի և արտաքին մի բան է:

Առաջին հայացքից կտրուկ և անընդունելի թվացող վերոհիշյալ ձևակերպումները, որպես կանոն, հիմնականում հավասարակշռված են համակարգային մոտեցման հիմքի վրա: Ճիշտ է, **լեզու-խոսք** հարաբերակցության մեջ Սոսյուրը նախապատվությունը տալիս է լեզվին՝ իբրև հասարակական երևույթի, բայց խոսքն էլ անբաժան է լեզվից. նրանք մեկ ամբողջի՝ **լեզվախոսության (langage)** երկու դրսևորումներն են, որոնք փոխապամանավորված են մեկը մյուսով²⁶:

Դրանից բացի, սոսյուրյան «հնչույթաբանությունն», ըստ էության, համապատասխանում է կամ մոտ է հնչյունաբանությանը ժամանակակից ըմբռնումով: Հայտնի է, որ 19-րդ դարի վերջին և 20-րդի սկզբներին փորձառական մեթոդների կիրառումը հնչյունաբանական հետազոտություններում ձևավորեցին այն տեսակետը, համաձայն որի՝ հնչյունաբանությունը պիտի դասել բնական գիտությունների շարքին: Հավանաբար այդ մտայնությունն առկա է նաև «հնչույթաբանությանը» լեզվաբանության համար «օժանդակի» կարգավիճակ հատկացնելու սոսյուրյան տեսակետի դեպքում:

Սոսյուրը համարվում է սոցիոլոգիական ուղղության, մասնավորապես՝ ժնկի սոցիոլոգիական դպրոցի հիմնադիրը, բայց նրա լեզվաբանական ուսմունքի սաղմերը ձևավորվում են երիտքերականական ուղղության ակունքներում: Եվ որքան էլ կյանքի վերջին շրջանում («Դասընթացի» ձևավորման փուլում) նա քննադատաբար է վերաբերվել երիտքերականների ուսմունքին, այնուամենայնիվ վերոնշյալ հանգամանքն անհետևանք չի անցել նրա ընդհանուր լեզվաբանական հայացքների ձևավորման գործում: Մի կողմից՝ նա լեզուն համարում է հասարակական երևույթ, մյուս կողմից՝ լեզվին տալիս է հոգեբանական բնութագիր («...լեզուն...ձայնաբանական տպավորությունների հոգեբանական հակադրության վրա հիմնված համակարգ է», - 58): Հետևաբար, «հնչյունը» նույնպես՝ իբրև լեզվական միավոր, հոգեկան բնույթ ունի: Հոգեբանական բնութագրով սոսյուրյան հնչյունն ընդհանրություն ունի Բոդուենի հնչույթի հետ, բայց, ի տարբերություն վերջինի, որն ընկալվում է որպես խոսքային տարբերակների վերացարկում («հնչյունի հոգեկան համարժեք»), «Դասընթացում» «հնչյունն» օժտված է ֆիզիկական, նյութական բնութագրով. այստեղ «հնչյունի» տարբերակման չափանիշ է համարվում ձայնաբանական տպավորությունը («Քանի դեռ համասեռության տպավորությունը պահպանվում է, հնչյունը նույնն է», - 66):

Եթե տերմինային նշանակման տեսանկյունից սոսյուրյան «հնչույթն» ընդհանուր առմամբ նույն տրամաբանության սահմաններում է, ինչ հնչյունն ըստ հնչաբանական այլ ուսմունքների, ապա նույնը չի կարելի ա-

²⁶ Стен Де Соссюр Ф. Заметки по общей лингвистике. М., 1990, էջ 18:

սել նրա կողմից «հնչյուն» տերմինով նշանակված միավորի մասին. վերջինի բնորոշ հատկանիշ է համարվում արտաբերական աշխատանքների անփոփոխությունը, հետևաբար՝ դարձյալ հնչյունաբանական հայեցակերպը: Այդ բնութագիրը դժվարացնում է «հնչյունի» սահմանազատումն իր իսկ «հնչույթից», հատկապես որ բացակայում են համապատասխան օրինակները, որոնք պարզություն կմտցնեին այդ հարցում²⁷:

Հնչույթի սոսյուրյան ըմբռնման արձագանքները կարելի է տեսնել ժ. Վանդրիեսի «Լեզու» գրքում, չնայած այն իրողությանը, որ վերջինս հնչույթի տեսության հարցեր չի քննում. «Մենք այստեղ հավատարիմ կմնանք հին դպրոցի սովորույթներին՝ սահմանափակվելով հնչյունի արտադրության, այսինքն՝ արտաբերության (հնչման) ուսումնասիրությամբ և այդ արտաբերության արդյունքների, այսինքն՝ հնչույթների նկարագրությամբ»²⁸:

Կարծում ենք՝ վերոշարադրյալը հիմք է տալիս ասելու, որ Ֆ. դը Սոսյուրի հնչույթաբանական (իր տերմինով՝ «հնչյունաբանական») հայեցակարգն ունի ֆիզիկական- ձայնաբանական ելակետ:

Սոսյուրի հնչաբանական հայացքների համար ոչ պակաս կարևոր է մեկ իրողություն ևս: Լեզվական փոփոխությունները հասկանալու համար կարևորելով հնչյունական փոփոխությունների բացատրությունը՝ նա առաջադրում է հնչաշղթան բաղադրող հնչույթակապակցություններն ուսումնասիրող գիտության գաղափարը («հնչյունների տեսակների հնչույթաբանության [իմա՝ հնչույթների տեսակների հնչյունաբանության - Վ. Պ.] կողքին հնարավոր է այնպիսի գիտություն, որի համար ելակետային են երկհնչյուն խմբերը և հնչույթների հաջորդականությունը [իմա՝ երկհնչույթ խմբերը և հնչյունների հաջորդականությունը] և սա բոլորովին այլ բան է», -83): Այդ գիտությանը նա տալիս է «հնչյունախմբերի հնչույթաբանություն», «զուգակցական հնչույթաբանություն» [իմա՝ **հնչույթախմբերի հնչյունաբանություն, զուգակցական հնչյունաբանություն**] բնորոշումները: Հնչույթախմբերի քննությունը անմիջականորեն առնչվում է վանկի քննությանը («...վանկատումը միակ իրողությունն է, որի վրա նրանում հիմնված է ամեն ինչ՝ ծայրից ծայր», - 82, 83), քանզի մի կողմից՝ վանկն է հնչաշղթայի անդամատումից ստացվող անմիջական բաղադրիչը, մյուս կողմից՝ վանկը հնչույթախումբ է կամ հնչույթախմբերի կապակցություն:

Իհարկե, «հնչյունախմբերի հնչույթաբանությունն» ուսումնասիրող առանձին գիտություն չստեղծվեց (ի տարբերություն, օրինակ, լեզվաբանական նշանագիտության), բայց ակնհայտ է, որ 20-րդ դարի հնչյունաբանական միտքը մեծ ուշադրություն դարձրեց հնչաշղթայի ուսումնասիրության

²⁷ Ռումինացի լեզվաբան Յորգու Յորդանը գրում է. «Դժվար է պատկերացնել լեզվական փաստերի ավելի խոր և ավելի օբյեկտիվ դիտարկող, քան Սոսյուրն է: Այդ պատճառով նրա բացատրությունները մեծ մասամբ շատ հստակ են, գրեթե մաթեմատիկորեն ճիշտ են և հաճախ համոզում են» (Йордан Й. Романское языкознание. М., 1971, с. 413): Իսկ նրա հնչաբանական հայացքների առնչությամբ ավելացնում է. «Սոսյուրը լիովին արդարացված կերպով բաժանում է այդ երկու գիտակարգերը [իմա՝ հնչյունաբանությունը և հնչույթաբանությունը- Վ. Պ.], երբ տալիս է նրանց բնորոշումը, բայց նրա կողմից գործածվող տերմինաբանությունը չի վերացնում այն շփոթը, որից նա ձգտում էր խուսափել» (նույն տեղում, էջ 420):

²⁸ Вандриес Ж. Язык. М., 1937, с. 31.

նը, կարևորեց ինչպես վանկի, այնպես էլ պարզապես երկու հնչյունի կապակցության դերը խոսքաշղթայում: Այդ հիմնահարցերի քննությունը դարձավ փորձառական հնչյունաբանության հիմնական ուղղություններից մեկը:

Անդրադառնալով տառադարձական այբուբենի («հնչյոթային գրության») նշանակությանը՝ Սոսյուրը նկատում է, որ «գիտությունից դուրս հնչյոթային [իմա՝ հնչյունական- Վ. Պ.] ճշգրտությունն այնքան էլ ցանկալի չէ» (59), քանզի ստեղծել բոլոր լեզուների համար ընդհանուր «հնչյոթային» այբուբեն՝ նշանակում է՝ այն ծանրաբեռնել մեծաքանակ տարբերակիչ նշաններով և ըստ էության՝ նրան զրկել կիրառական արժեքից: «Հնչյոթային գիրը պետք է միայն լեզվաբաններին սպասարկի» (ն. տ.), այսինքն՝ մնա գիտության շրջանակներում:

Երևույթը դիտարկելով հակառակ դիրքերից, ըստ ամենայնի, նույն խնդիրը նկատի ունի Բոդուեն դը Կուրտենեն՝ գրելով. «Հնչյոթների դեպքում ընկնել մարդահնչական ճշգրտության ետևից մեթոդաբանական մեծ վրիպում կլինի, որը ուսումնասիրողներին կշփոթեցնի և նրանց թույլ չի տա խստորեն բաժանել այն, ինչը չպիտի շփոթված լինի և միավորի այն, ինչը ոչ մի կերպ չպիտի բաժանված լինի» (1, 123):

Որպես խոսքային միավոր հնչյունն ունի անհատական բնույթ: Յուրաքանչյուր անհատի գիտակցության մեջ կա հնչյունի պատկերացումը՝ հնչյոթը, որը միևնույն հասարակական կոլեկտիվի շրջանակներում ապահովում է անհատից անհատ արտաբերական և ձայնաբանական յուրահատկություններ դրսևորող հնչյունի (հնչյունների)՝ իբրև միևնույն հաղորդակցական միավորի միասնությունը: Գիտակցությունն արտացոլում է լեզվական համակարգը, հետևաբար հնչյոթը պատկանում է լեզվին: Հնչյոթը միաժամանակ անհատական է ու հասարակական և այդ երկբնույթ նկարագրով է իրականացնում իր գործառույթը՝ որպես հասարակական հաղորդակցման նվազագույն հիմք: Հնչյուն-հնչյոթ կապն ապահովվում է ոչ միայն համեմատաբար կարճ ժամանակահատվածում (համաժամանակայնություն), այլև՝ պատմականորեն երկարատև ժամանակամիջոցում (տարածամանակայնություն):

Ըստ Սոսյուրի՝ հնչական համակարգի փոփոխությունները գրանցվում են նախ՝ խոսքում, ապա՝ լեզվում («...պատմականորեն խոսքային իրողությունը միշտ նախորդում է»), իրականում, սակայն, այս հարցին միանշանակ պատասխանել հնարավոր չէ, բայց ակնհայտ է, որ այդ փոփոխությունները դրսևորվում են խոսքի միջոցով: Հետևաբար, ակնհայտ է նաև, որ խոսքային հնչյունը (կամ պարզապես հնչյունը) իսկապես պատմականորեն փոփոխվող միավոր է: Հնչյոթը («լեզվական հնչյունը») անփոփոխ է այնքան ժամանակ, քանի դեռ հնչյունական փոփոխությունը չի վերածվել նոր որակի (հմմտ. գրբ. եաւ>յո. օր.՝ եաւթն [էաւթն] > յոթ(ն) > [յօթ]):

Ներկայացված քննությունից կարելի է եզրակացնել.

1) հնչյոթաբանական գիտակարգի հիմքում ընկած բազմաթիվ գաղափարներ, այդ թվում՝ առանցքային նշանակության դրույթներ, որոնց հիման վրա ձևավորվել են ամբողջական տեսություններ, սկիզբ են առնում Բոդուեն դը Կուրտենեի հնչյոթաբանական հայացքներից.

2) թեպետև հետագա տարածումն չունեցան ինչպես Բողունի մշակած վերջնական՝ հոգեբանական հայեցակարգը, այնպես էլ նրանում առաջարկված առանցքային տերմինները («մարդահնչաբանություն», «հոգեհնչյունաբանություն»), բայց ակնհայտ է, որ այդ տերմիններով ներկայացված բովանդակությունը հիմնականում ընդունվեց հաջորդների կողմից, իհարկե՝ ճշգրտումներով և հարստացումով. մի բան, որ չի կարելի ասել Ֆ. դը Սոսյուրի հնչույթաբանական հայեցակարգի մասին. վերջինիս ոչ միայն բնորոշ է տերմինաբանական շփոթը՝ ժամանակակից հնչույթաբանության տեսանկյունից, այլև՝ բովանդակային անհստակությունը.

3) Սոսյուրի հնչույթաբանական պատկերացումները հետազոտողների ուշադրությունը գրավել են հատկապես երկու պատճառով՝ ա) լինելով հնչույթի մասին ուսմունքի առաջին փորձերից մեկը, բ) շնորհիվ ընդհանրապես «Դասընթացի», հետևաբար՝ նաև նրա հեղինակի անվան շուրջ ձևավորված մեծ հետաքրքրության, որը միանգամայն օրինաչափ էր: Այնուամենայնիվ, Սոսյուրի հնչույթաբանական հայացքները արժանիքներից զուրկ չեն թեկուզ և այն բանի համար, որ սկզբնավորող դեր են ունեցել խիստ հեռանկարային լեզվաբանական գիտակարգի՝ հնչույթաբանության ձևավորման ճանապարհին.

4) չնայած հնչույթաբանության մեջ առկա խիստ բազմազան, հաճախ իրարամերժ տեսակետներին ու տեսություններին, այնուամենայնիվ, փաստ են հնչույթաբանական գիտակարգի գոյությունը և ամբողջաձևավորվածությունը (որքանով որ «ամբողջաձևավորված» կարելի է համարել չնվազող ուշադրության դաշտում գտնվող գիտական ոլորտը). հնչույթաբանությունը ներկա դրությամբ հասավ 20-րդ դարի 80-ական թվականներին, չնայած այն հանգամանքին, որ հնչույթի մասին տեսության առաջին դիտարկումները դրսևորվեցին դեռևս 19-րդ դարի 70-80-ական թվականներին.

5) եթե Ն. Ս. Տրուբեցկոյը, շնորհիվ «Հնչույթաբանության հիմունքներ» կապիտալ աշխատության, համարվում է հնչույթաբանական գիտակարգի հիմնադիրը, ապա հնչույթի մասին ուսմունքի հիմնադիրը, իրավամբ, Ի. Ա. Բողունն էր. դր Կուրտենեն է՝ 19-րդ դարավերջի և 20-րդ-ի սկզբի մեծագույն լեզվաբաններից մեկը, որի անվան հետ է կապվում ռուս լեզվաբանության մի ողջ դարաշրջան. Ֆ. դը Սոսյուրի հնչույթաբանական ուսմունքը ուշագրավ ներդրում է այդ ճանապարհին:

ВАРДАН ПЕТРОСЯН – Возникновение понятия фонемы и фонология как дисциплина. – Понятие фонемы как отличной от звука фонематической единицы было предложено в 70–80-е годы XIX века выдающимися лингвистами Ф. де Соссюром и И. А. Бодуэном де Куртенэ. Если фонологические взгляды Соссюра носили физическо-артикулярный характер, то эволюция фонологических воззрений Бодуэна привела его к разработке психологической концепции фонемы. Правда, современная фонология не является прямым развитием учения ни того, ни другого, но анализ фонологических учений XX века позволяет заключить, что в формировании многих из них чрезвычайно велика роль фонологических взглядов Бодуэна де Куртенэ.

VARDAN PETROSYAN – *The Formation of the Idea of Phoneme and the Category of Phoneme.* – Two famous linguists of the 1870-1880s – F. de Saussure and B. de Courtenay – were the first to promote the idea of phoneme as a different phonetic unit. Saussure's phonemic understanding has physical-pronounceable description, whereas the evolution of Courtenay's views reaches to the elaboration of psychological concept. Modern category of phoneme is the direct development of neither of them, however the analysis of the 20th century phonemic studies leads to the conclusion, that in the formation of most phonemes especially Courtenay's views play an important role.